#StrongerTogether

#EasternPartnership

EaP | Eastern Partnership

Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխումներ. Արևելյան գործընկերության գերակայությունները 2020 թ.-ից հետո՝ հօգուտ բոլորի

Հուլիս 2021

Արևելյան գործընկերության նպատակն է խորացնել և ամրապնդել հարաբերությունները Եվրոպական միության, նրա անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև: Այն հենվում է ներառականության և տարբերակման սկզբունքների, այդ թվում՝ անհատական մոտեցման, ինչպես նաև խթանների վրա հիմնված ընդլայնված համագործակցության վրա: Հիմնվելով «20 թիրախային արդյունք 2020-ի համար» օրակարգի, 2020թ. մարտի համատեղ ուղերձի ու Խորհրդի 2020թ. մայիսի եզրակացությունների վրա՝ ԵՄ-ն ներկայացրել է 2020թ.-ից հետո ժամանակահատվածի համար Արևելյան գործընկերության գերակայությունները: **Քաղաքականության հինգ նպատակներին** համահունչ այս գերակայությունները կամրապնդեն գործընկեր երկրների դիմակայունությունը՝ **երկու բաղադրիչների** ուղղությամբ ներդրումների հաշվին:

Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխումներ. Արևելյան գործընկերության գերակայությունները 2020 թ.-ից հետո

5 ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՄԻԱՍԻՆ՝ հանուն դիմակայուն, կայուն և ինտեգրված տնտեսությունների

ՄԻԱՍԻՆ՝ հանուն շրջակա միջավայրի և կլիմայի դիմակայունության

ՄԻԱՍԻՆ՝ հանուն հաշվետու հաստատությունների, օրենքի գերակայության և անվտանգության

ՄԻԱՍԻՆ՝ հանուն դիմակայուն թվային փոխակերպման

ՄԻԱՍԻՆ՝ հանուն դիմակայուն, գենդերային առումով հավասար, արդար և ներառական հասարակությունների կառուցման

2 ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Աջակցություն COVID-19-ից հետո արևելյան գործընկեր երկրների սոցիալ-տնտեսական վերականգնմանը և ակտիվացմանը՝ դրանց կանաչ և թվային անցումն արագացնելու միջոցով: Այդ աջակցությունը ներառում է **տնտեսական և ներդրումային ծրագիր**՝ երկրներից յուրաքանչյուրի համար նախատեսված հատուկ առաջանցիկ նախաձեռնություններով:

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Բարեփոխումների ուղղությամբ ներդրումներ կատարելը և **ընդհանուր հիմնարար արժեքների նկատմամբ հարգանքն** ընկած են մեր գործընկերության հիմքում: Սա ներառում է աջակցություն ժողովրդավարությանը, մարդու իրավունքներին, օրենքի գերակայության բարեփոխումներին, կոռուպցիայի դեմ պայքարին, գենդերային հիմնահարցերին, քաղաքացիական հասարակությանը և անկախ լրատվամիջոցներին:

Արևելյան գործընկերության տնտեսական և ներդրումային ծրագիր

Հիմնական նոր տարրը տնտեսական և ներդրումային ծրագիրն է: Այն դրամաշնորհների, խառը ֆինանսավորման և երաշխիքների տեսքով **2.3 միլիարդ եվրո** կմոբիլիզացնի **Եվրամիության բյուջեից՝ հետհամավարակային վերականգնմանն աջակցելու և Արևելյան գործընկերության տնտեսությունների կայուն փոխակերպման համար՝** դրանք ավելի դիմակայուն և ինտեգրված դարձնելու նպատակով: Ծրագիրը կարող է ներգրավել մինչև **17 միլիարդ եվրոյի** պետական և մասնավոր ներդրումներ:

Այն ներառում է.

✓ **Տրանսպորտային** հաղորդակցության բարելավում

✓ **Փոքր և միջին ձեռնարկությունների** համար ֆինանսների մատչելիություն

✓ Բաժնեմասնակցային կապիտալի ուղղությամբ ներդրումների իրականացում՝ մրցունակության ամրապնդման և **ԵՄ արժեքային շղթաներին ինտեգրման** նպատակով

✓ Աջակցություն **թվային փոխակերպմանը**

✓ Ներդրումների իրականացում **շրջակա միջավայրի և կլիմայի դիմակայունության**, այդ թվում՝ էներգաարդյունավետության ուղղությամբ

✓ **Առողջապահական դիմակայունություն** և **մարդկային կապիտալի զարգացում:**

Ծրագիրը պարունակում է մի շարք **առաջանցիկ նախաձեռնություններ**՝ նախատեսված **գործընկեր երկրներից** յուրաքանչյուրի համար: Դրանք ներառում են շոշափելի արդյունքներով հստակ գերակայության ծրագրեր:

10 հիմնական նպատակ 2025թ. համար

Համապարփակ օրակարգի շրջանակում որպես գործունեության գերակա ուղղություն են սահմանվել **2025թ. համար 10 հիմնական նպատակները**: Յուրաքանչյուր երկրի համար մշակված առաջանցիկ նախաձեռնությունների հետ մեկտեղ դրանք **առավել փոխակերպիչ ազդեցություն են ունենալու քաղաքացիների** և բիզնեսի կյանքում:

Ներդրումներ մրցունակ և նորարարական տնտեսությունների ուղղությամբ

Աջակցություն

500,000 ՓՄՁ-ների

Ներդրումներ օրենքի գերակայության ուղղությամբ

Բոլոր բարձրաստիճան պաշտոնյաների կողմից սեփական տնտեսական ակտիվների հայտարարագրում, ինչպես նաև այդ հայտարարագրերի ստուգում

Ներդրումներ անվտանգության և կիբեռդիմակայունության ուղղությամբ

Հիբրիդային սպառնալիքների բացահայտման և դրանց վերացման կառուցակարգի ամրապնդում, գործընկերների կարողությունների ամրապնդում՝ կիբեռդիմակայունության բարձրացման և կիբեռհանցագործությունների դեմ պայքարի նպատակով, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կիբեռհանցագործությունների մասին Բուդապեշտի կոնվենցիայի լիարժեք իրականացման միջոցով

Ներդրումներ մարդկանց և գիտական համայնքների ուղղությամբ

70,000

անհատական շարժունակության հնարավորություն

ուսանողների և դասավանդողների, հետազոտողների, երիտասարդների ու երիտասարդական աշխատողների համար

Ներդրումներ կայուն և խելացի կապի ուղղությամբ

3,000 կմ

երկարությամբ առաջին անհրաժեշտության ճանապարհների ու երկաթուղիների

կառուցում կամ բարեկարգում

Ներդրումներ ներառական, գենդերային առումով հավասար և տարբեր հասարակությունների ու ռազմավարական հաղորդակցության ուղղությամբ

Աջակցություն **2,500** տեղական ՔՀԿ-ների, **120** անկախ ԶԼՄ-ների և **2,000** լրագրողների

Ներդրումներ առողջապահական դիմակայունության ուղղությամբ

850,000

բուժաշխատողի պատվաստում, ինչպես նաև նրանց համար թերապևտիկ, գոյքային և աշխատանքային պայմանների բարելավում

Ներդրումներ կայուն էներգիայի ուղղությամբ

250,000

տնային տնտեսությունների կողմից էներգասպառման նվազեցում

մինչև 20%-ով

Ներդրումներ թվային փոխակերպման ուղղությամբ

Տնային տնտեսությունների **80%**-ն ունի գերարագ ինտերնետի մատչելի հասանելիություն

Ներդրումներ շրջակա միջավայրի և կլիմայի ուղղությամբ

Եվս **3** միլիոն մարդու ապահովում անվտանգ ջրամատակարարմամբ: **300** քաղաքներում օդի որակի վերահսկում և բարելավում

EaP | Eastern Partnership